չական. «ի թուականութեանս հայոց ·ԷՃ· ու ի Ժ՟Ե, ի հայրապետութեանն տ՟ն Սարգսի մարհասիայի մեծի». (տես. լուսանկարը. Տախտակ Ծ)։

Նկարուած է յիշատակարանը $171^{բ}$., բնագիրը 13×9,2 սմ. առանց վերջին տողի, «յիշեայ». մեր նկարը 14,4×10,1, ուրեմն բնագրից քիչ մեծ։

85. 86. *Մատ. Ս. էջմ. Տաթև 9/4139. Տօնապատճառ Վարդանայ վարդապետի. թուղթ 25×17 սմ., 517 թերթ։ Գիր արևելեան բոլորգիր (անցման), մի իջեան, 19×11,8 սմ.։ Գրիչներն են Յովսէփ և Տիրացու. վերջինս Վարդան վարդապետի՝ գրքի հեղինակի՝ աշակերտը, «ի Վանանդ գաւառէ, ի Կարս քաղաքէ»։ Սորա գրածն է նաև Ս. էջմ. Մատենադարանի № 1204/1119։ ՏԵՂ. Հաղբատ, «ընդ հովանեաւ տիեզերալոյս տ՟րունական ս՟բ և ա՟ծընկալ Նշանիս և . . . Ա՟ծածնիս». $516^{բ}$.։ ԺԱՄԱՆԱԿ. 1267 Թ. փրկչական. «(ի Թուա-կա)նութե՟ս Հայոց ՉԺԶ», «յաթոռակալութե՟ն տ՟ր Յո՟վլի, մեծի հռետորի և ս՟ր վերադիտողի», որ Հաղբատայ վանահայրն է։*

Նկարուած է ա) $114^{ա}$. Յովսէփ գրչի. բնագիրն է 13,2×11,8 սմ, մեր նկարը $10,8\times9^{1}/_{2}$ սմ։

բ) $292^{ա}$. Տիրացու գրչի. բնագիրը $19^{1}/_{2}\times11,8$ սմ., մեր նկարը 14,2×8,2 սմ։

87. *Մատ. Ս. էջմ. Գ. № 295/3082. Տօնապատճառ, թուղթ $20^{1}/_{2}\times16$ սմ., թերթ 477։ ԳԻՐ. Բոլորգիր, մի իջեան, $16^{1}/_{2}\times11^{1}/_{2}$ սմ.։ ԳՐԻՉ Սկևռայի գըրչութեան դպրոցի նշանաւոր ուսուցիչ Գէորգ Լամբրոնացին, պատմեկութեան համակում, երբ Կիլիկիայից գալով աշակերտում էր Վարդան վարդապետին Խոր վիրապում։ ՍՏԱՑՈՂ Գրիգոր վարդապետ, «սպասաւոր բանի», եղբայր վերոյիշեալ Վարդանայ վարդապետի։ ՏԵՂ. Սկսուած է Խոր վիրապում, շարունակել է Սաղմոսավանքում և վերջացրել Թեղենեաց վանքում։ ԺԱՄԱՆԱԿ. 1268 Թ. փրկչական. «ի շրջագայութե՟ ամանակաց Թուաբերութե՟ հայկականս աղին ռումբի յարաբարդեալ ամաց չորեքտասան յիսնեկաց՝ հանդերձ առաջին կատարեալ Թուով վեցեկաւ ընդ տասնեկի շարամանելոյ»։*

Ծանօթ. Գրիչը հատուածների վերջում, երբեմն, գրում է յունարէն. օր. 138 κε ελεησον γοργη.

Նկարուած է $476^{ա}$. յիշատակարանից. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

88. *Մատ. Ս.էջմ. № 222/287 (Կ. 215), Աստուածաշունչ թերի, սկսւում է Յովբից. 21×15 սմ., 287 թերթ. Ընտիր մագաղաթ, մակերևոյթը ողորկ և շօշափելիս գուրեկան։ ԳԻՐ Գեղեցիկ բոլորգիր, երկիջեան $16^{1}/_{2}\times5$ սմ.։ ԳՐԻՉ. Կոստանդին քահանայ գրիչ։ ՍՏԱՑՈՂ. Պետրոս (քահանայ կամ կրօնաւոր), «որ ետ գրել զսա ի վարժումն անձին իւրոյ և ծնաւղաց իւրոց և բնաւ զարմին»։ Պետրոսը իւր կողմից խնդրում է յիշել ոմն քահանայապետի, որ իւր ուսուցիչն է եղել «եւ բազում սատարութի՟ս ընձեռեաց մեզ ընչիւք և աւրինակաւ»։ Տարաբաղդաբար ուսուցչի անունը քերուած է յիշատակարանի մէջ։ Ժամանակի կաթուղիկոսն էլ (Յակոբ Կլայեցի ?) «մանաւոր աւգնեաց*